թիւն մարդոյ 'ի յաշխարհէն թշնամեաց 'ի ժամանակի պատերազմի հնազանդելով մեզ զտանելով պահպանութիւն 'ի մէջն դաւաճանասցի, սա-պիսի մեղաւորն և մեղաւորք դատաստան ընդունիլ արժան է ըստ համեմատութեան ՄԱՍՍՈՒ դաւաճանութեանց իւրեանց մինչև 'ի մահ, և զերութիւն և ինչս նոցա աւար, վճիռ մեղացս կարէ ելանել սպարապետէ մերմէ որ հրամայէ 'ի վերայ նոյն գնդի զօրաց որ դաւաճանն զտաւ հնազանդեցեալքս իւր, ըստ արժանաւորութեան ՄԱՍՍՈՒ դաւաճանութենէ իւրեանց։

ԳԼՈՒԽ ՅՂԲ.

Ամենայն ծախ 'ի վերայ ամենայն իրաց որ հատուցումն վերաբերէ 'ի տանէն հայոց առնելոյ, ծախողն նոյն դրամին պարտ է համարն արարեցեալ ծախին իւրոյ արդարութեամբ շաբեսցի, և առաջի դատաւորի միոյ երդմնեսցի 'ի վերայ սրբոյ կտակարանի, խոստովանելով թէ գրեցեալ համարն իւր իրաւ և արդար է, և ատենի նոյն դատաւորի ձեռնադրեսցի համարն իւր, և ապա լինիցի հատուցումն 'ի տանէն հայոց։

ԳԼՈՒԽ ՅՂԳ.

Ոչ ոք թաքստեան պահիցէ 'ի տան և 'ի այգոյ և 'ի հանդի իւրում մեղաւոր եթէ քրէ-